ԳԱՌԵՐԿ ԱԽՈՒՐ

Յ. ԹՈՒՄԱԵՎԱՆ

ԳԱՄԲԻԿ ԱԽՊԷՐ.

Երկու որբեր,
քուր ու ախպէր,
կորած գընում են հեռու.
արևը վառ,
ճամփէն երկար,
ոչ աղբիւր կայ, ոչ առու։

Քոյրը մեծ էր, ինց որ լինէր
գէկը համբերէր արևին,
Բայց ախպէրը փոքրիկ էր դեռ,
Չէր դիմանում ծարաւին։

Գընում են, գընում, տեսնում են ճամփին,
կովի ոտնատեղ՝ մէջը լիքը ջուր։
«Քուրիկ Ջան, քուրիկ, ես շատ եմ ծարաւ,
ի՞նչ կըլի թողնես խըմեմ մի պուճուր»։

Չէ՛, ախպէր Ջան, չէ՛, դու կով կը դառնաս,
կովի կըճդակի տեղից մի խըմի.
մի քիչ էլ կացի... քիչ էլ որ կենաս,
առաջներըս պաղ աղբիւր կայ հիմի։

282 ր.
ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
ՏՈՒՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Երկու որբեր,
քուր ու ախպէր,
գընում, գընում են հեռու.
արևը վառ,
ճամփէն երկար,
ոչ աղբիւր կայ, ոչ առու։

Գընում են, գընում, տեսնում են ճամփին
ձիու ոտնատեղ՝ մէջը լիքը ջուր։
«Քուրիկ Ջան, քուրիկ, ես շատ եմ ծարաւ,
ի՞նչ կըլի թողնես խըմեմ մի պուճուր»։

—Չէ՛, ախպէր Ջան, չէ՛, դու ձի կը դառնաս,
ձիու սըմբակի տեղից մի խըմի,
մի քիչ էլ կացի, քիչ էլ որ կենաս՝
մօտիկ մի գուլալ աղբիւր կայ հիմի։

Երկու որբեր,
քուր ու ախպէր,
գընում, գընում են հեռու.
արևը վառ,
ճամփէն երկար,
ոչ աղբիւր կայ, ոչ առու։

Գընում են, գընում. տեսնում են ճամփին
գառան ոտնատեղ՝ մէջը լիքը ջուր։
Փոքրիկ ախպէրը էլ չի համբերում,
քըրոջից թաքուն խըմում է պուճուր։

Քոյրը մին էլ ետ է նայում,
որ մի գառը մղկըտալի
իր ետևից տրխուր մայում
ու մայելով վազ է տալիս։

Խեղճ Մանուշը վայ է տալիս,
վայ է տալիս, լալիս, լալիս.
բայց էլ ինչ անէր,
բայց էլ ինց անէր...

Երկու որբեր,
քույր ու ախպեր,
գառն ու աղջիկ մոլորված,
հեռու երկրում
տրխուր-տրխուր
գընում, գընում են կորած։

Սոված ու ծարաւ գընում են, գընում
գընում են, գընում, չը գիտեն թէ ուր.
վերջապէս մի հով անտառ են մտնում,
անտառի միջին մի զանգակ աղբիւր։
Կուշտ-կուշտ խըմում են էն սառը ջրից,
յետոյ Մանուշը ծառն է բարձրանում,
գառնիկ ախպէրն էլ ծառերի տակին
մուշ-մուշ արածում, արոտ է անում։
Իրիկան պահին խրխինջ ու քըրքիջ...
լցւում է յանկարծ անտառն աղմուկով.
մօտիկ են գալի ձայները քիչ-քիչ...
մօտիկ են գալի ծիծաղով, երգով...



Եւ ահա ոսկի սանձերից բռնած
բերում են Ջրեն ձիանքն արքայի։
Ամեհի ձիանքն աղբիւրից խրոխտած՝
ծառս-ծառս են կանգնում ու մօտ չեն
գալիս։

Մրտիկ են տալիս ծառայքը մէկ էլ,
որ սիրուն մի ցոլք Ջրի մէջն ընկել,
ու Ջուրը քանի ալիք է տալիս,
նա էլ Ջրի հետ գընում է գալիս։

Նայում են վերև։ Ի՞նչ տեսնեն, Աստուած.
մի հուր-հրեղէն, մի շարմաղ աղջիկ,
.ծառի ճիւղերին նստելի նըստած՝
նայում է ներքև լուրիկ ու մընջիկ
Մի սիրուն աղջիկ արմանք ու զարմանք։
Զարմանք է պատում խեղճ ծառաներին.
Տէր Աստուած, արդեօք ի՞նչ հրաշք է սա,
վայրի անտառում ի՞նչ ծառին։
—Ո՞վ ես, չքնաղ, տեսիլք ես դու,
թէ հողեղէն արարած.
թէ տեսիլք ես՝ կաց մի քիչ էլ,
թէ աղջիկ ես արի ցած։
Ցած եկ տեսնենք ինչպէս եղաւ,
որ ծագեցիր դու մեզ մօտ.
ինչ ցաւ է քեզ արդեօք բերել
մեր աշխարհքը անծանօթ.
—Մեզ որբութեան ցաւն է բերել
ձեր աշխարհքը անծանօթ։
Ձայն է տալի ծառի վրից
մեր Մանուշը ամաչկոտ։
Մենք տուն չունենք, ոչ ապաւէն
էս լայն արձակ աշխարքում,
մութն էլ հիմի շուտով կընկնի,
վախենում ենք անտառում։



Ու ծառաները գառն ու աղջկան
առնում են բերում պալատն արքայի։
«Ո՞վ ես դու, սիրուն, հարցնում է արքան,
անքան գառան հետ ինչ ես ման գալի»։
Կանգնում է աղջիկն էստեղ նորից նոր
պատմում է, ինչ որ պատմեցի ես ձեզ.
Թէ ապրած կենաս, ահեղ Թագաւոր
մեր բանը, հապա, էսպէս ու էսպէս...

Թագաւորն երբ որ լսում է մին մին՝
եւ շատ ցաւում է, և շատ հաւանում.
անում է նրան իրեն Թագուհին,
եօթն օր, եօթ գիշեր հարսանիք անում։
Ու փառքի միջում, շքեղ զահլիճում,
լիքն ու երջանիկ ապրում է Մանուշ.
Գառնիկ ախպէրն էլ ճոխ պարտէզներում
արօտ է անում ու խաղում անուշ։



Պալատումը կար նախանձոտ ու չար
մի պառաւ կընիկ, հրնուց ազախին.
Նախանձում է սա, թէ ինչ պիտի գայ
մի որբ՝ թագուհի դառնայ մեր գլխին։
Մի օր էլ գալի, գլուխ է տալի,
առաջը կանգնում կեղծաւոր գովում.
«Արի քեզ տանեմ, սիրուն թագուհի,
չըփ-չ՚ըփ, լողացնեմ շարմաղ էն ծովում»
Խաբում է, տանում, գցում ծովի մէջ,
շորերը առնում, ետ բերում քաղաք,
հագցրնում իր սև, դարձուոր աղջկան,
պալատ ուղարկում թագուհու տեղակ։
Երեսը ծածկած թանձրը շղարշով
պալատ է մրանում էն սուտ թագուհին,
ու թագաւորն էլ կասկած չի տանում,
թէ ով է եկել բազմել իր գահին։

Բայց ինչ անում են, ինչ որ չեն անում,
չեն կարում էլ տուն բերեն Գառնիկին.
մայում—էս ափից էն ափն է վազում,
մայում—էն ափից ետ գալի կըրկին։
Ի՞նչ անենք սրբան, ինչ անենք սրբան.
պառաւն ու աղջիկ շատ միտք են անում.
վերջը գալիս է դարձուոր թագուհին
անկողին մրանում, հիւանդ ձևանում։
Էլ թանդ ուտելիք, էլ ազնիւ մրգեր
բերում են փրռում, խնդրում, աղերսում.
մրտիկ չի տալի ոչ մէկի վրրա.
վերջը Գառնիկի մրսիցն է ուզում...
«Բայց չէ որ, Մանուշ, քու եղբայրն է նա.
ինչ ես նրրա միսն ուզում դու հիմա»...
—Ի՞նչ անեմ, ինձնից նա ազիզ հօ չի։
Ես որ մեռնում եմ, թող նա էլ կորչի...
Ասում է՝ ճըչում. «վա՛յ, մեռա՛յ, ամա՛ն...»
Ու թագաւորը տալիս է հրաման.
«Կըրակ վառեցէք,
դանակ սրրեցէք,
բերէք մորթեցէք
Ախպէր-Գառնիկին,
որ առողջ լինի
իր քոյրը տիկին»։

Թագաւորն էսպէս պատւէր է տալի,
պատւէր է տալի ու դուրս է գալի,
գընում է ծովափ սատրիկ սրտնեղած,
թէ որքան Մանուշն անգութ է եղած...
Մայում է, լալիս Գառնիկ-Ախպէրը,
լացացնում է ժէռ ծովի ափերը,
մի ափից բըռնած միւս ափն է թըռչում,
մարդկային լեզուով քըրոջը կանչում.
—Քուրիկ Ջան, քուրիկ,
կըրակ են վառում,
կըրակ են վառում,
դանակ են սրում։
Քուրիկ Ջան, քուրիկ,
լսի անդունդից,
օգնութեան հասի,
ապանում են ինձ։

Լըսում է արքան՝ տեղը քար կըտրած,
և ալիքների միջից յանկարծ
շատ ծանօթ մի ձայն հեռու, խուլ ու խոր
կանչում է քնքուշ, կանչում է անզօր.
«Ախպէր Ջան, ախպէր,
անհէր ու անմէր,
անքուր ու անտէր,
իմ Գառնիկ-Ախպէր.
դըժար է տեղըս,
ձէնըս չեն լըսում,
ձէնըս չեն լըսում,
ձեռքս չի հասնում։
Ա՜խ, չար պառաւը
սև արաւ օրըս,
այժմ էլ կը սպանի
Գառնիկ-Ախպօրըս»։

Լրսում է արքան, պարսան է հանում,
պատռում է քողը թագուհու դէմքի.
պատռում է տեսնում.. բայց ի՞նչ է տեսնում,
ով է իր զահին եղել թագուհի...
—Եկէք ձկնորսներ, ուռկան ձրգեցէք,
հանեցէք ծովից մեր լաւ Մանուշին.
եկէք, դահիճներ, ծովը ձրգեցէք
կախարդ պառաւին ու էս հրէշին։
Էսպէս բարկացած գոռում է արքան,
ժողովուրդն ամեն թրնդում է ցաւից,
գալիս է կանգնում, ձրգում է ուռկան,
անմեղ Մանուշին հանում է ծովից։

Հանում է ծովից, գահին բարձրացնում,—
կրկին թագուհի ու տիկնանց տիկին
Գառնիկ Ախպէրն էլ անչափ խրնդումից
պատռում է իրեն ոչխարի մորթին,
դուրս գալի, կանգնում սիրուն տղամարդ,
ճակատն պայծառ, աչքերը վառ-վառ,
ոչխարի տրկար մայիւնի տեղակ
մարդկայինլեզուով ազատ ու ճարտար։
Իսկ չար պառաւին, իրեն աղջիկան,
որ խաբել էին աշխարհ բովանդակ,
վրդներից կապում ջաղացի քարեր,
ձրգում են ծովի անդունդը անտակ։
Երկու որբեր,
քուր ու ախպէր,
առած պատիւ, գահ ու թագ.
աշխարքն էլի
խաղաղ ու լի,
չարը թաղուած ծովի տակ։

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ

ՎԻՄԱԳՐԱՏՈՒԹԻՒՆ Գ. ԴՐԻՍՏԵՐԴԻԿԻ